տուն, յիսնիկ) կոչվում է այն պատճառաւ որ պատահում է շատ անգամ, այս պահոցս օրերը՝ քանի մի օրով պակաս են լինում, ահա ինչպէս:— Մեր մօմարական հաշուով, միշտ սկսում է այս պահքի բարեկենդանը՝ Նոյեմբերի կիսից յետոյ. և այսպէս հաշուելով մինչև Բրիտանոսի ծնունդն, որ է Յունվարի 6-ն. չէ լրանում 50 օր. այլ՝ քանի մի օր պակաս. ահա այս 1879 թ. Յիսնակաց պահոց առաջին օրն է 19 Նոյեմբերի. որ այն օրից մինչև Յունվարի 6-ին լինում է 49 օր:

Մենք չայերս պահում ենք այս պահքը՝ մասամբ. այն է՝ ընդ ամենը 17 օր. այն ևս միջոց տալով, երեք շաբաթների մէջ. նախ՝ Յիսնակամանի եօթնեկին պահում է 5 օր. յետոյ՝ Ս. Յակոբայ Մճբնայ հայրապետի շաբաթապահն, որ է նոյնպէս 5 օր. և ապա յառաջ է գալիս նոյն իսկ Բրիտանոսի Ծննդ. պահքն 7 օր:

Իսկ Յոյեկը՝ որոնց հետ և Պուսները՝ պահում են այս պահքս ամբողջ քառասուն օր. շաբաթակ, սկսեալ միշտ ի 15-էն Նոյեմբերի մինչև ի 25 Դեկտեմ:

Բայց Լատինացոց մէջ՝ այս պահքս կամուսը է. որ սկսվում է Բրիտանոսի Ծննդեան ամսից առաջ, եր-

բեմն երեք և երբեմն չորս շաբաթով. Բրիտանոսի ամսարի հաշուով:*)

51. Հանելուկ:

Աշխարհիս մէջ, մի հիւր կայ,
Առանց նորան տուն չկայ,
Ինքը երբէք չի խօսում՝
Բայց մարդիկ բարեւում են:

Ընցեալ տարուայ Հանելուկն էր,
Սուրբ Եկեղեցին:

52. Թէ ի՞նչ յառաջանք են ունենում պատերազմները:

Վ երջին քսան և հինգ տարուան մէջ, թէ որքան արժեցաւ եւրոպական պատերազմները:— Ահա գլխաւոր հաշիւը. յոյժ հետաքրքրական է:

*) Տես ճամբարի 2. Բ. տեսք է 101, 102.

Արինու ընկերակցութեան միջոցին, փչացաւ թէ՛ գաշտի վերայ պատերազմելով, թէ՛ վէրք ստանալով, և թէ՛ տկարութեամբ՝ 750 հազար մարդ. և ծախս է եղած՝ 340 միլիոն ֆունտ ստէրլինգ *)

Աւստրիայի—Պրուսական—Իտալական պատերազմի մէջ՝ 1866 թուին փչացաւ 45 հազար մարդ. և ծախս է եղել՝ 66 միլիոն ֆունտ ստէրլինգ:

Պաղլիական—Պրուսական պատերազմի մէջ՝ փչացաւ 215 հազար մարդ. և ծախս է եղած՝ 500 ֆունտ ստէրլ:

Իտալիայու պատերազմի մէջ, որ 1859 թ. էր փչացաւ 45 հազար մարդ, և ծախս եղաւ՝ 60 միլիոն ֆունտ ստէրլ:

Իսկ այս վերջին ժամանակուայ մէջ, որ դե՛ռ չը կար ներկայ պատերազմն՝ կոտորեցին բրիտաններէից, թէ՛ Բոլգարիայումն, թէ՛ Հայաստանումն, և թէ՛ այլ տեղեր՝ 25 հազար մարդ: Ահա այս հաշուով ընդհանուրի գումարն է որք անհետացան աշխարհից՝ 1,948,000 մարդ. և ծախս է եղած՝ 2,413,000,000 ֆունտ ստէրլինգ:

*) 1 ֆունտ ստէրլինգն՝ արժէ 6 ր. 29 կոպ. արծաթե սմբ. *

53. Մահ քիմիական թանաքներէից:

Քիմիական, նոր տեսակ Յա-խոննական և Յա-խոննական գրեշներէ գործադրութիւնը արդէն տարածուած է ևւերոպայի բոլոր երկրներում, որպէս և Ռուսաստանի մէջ. որոնք գրում են առանց թանաքի: Յա-խոննական կամ փիտիոն գրէի մէջ ճիւղի կողմը՝ գտնվում է պարունակած մի մասն АНИЛИНОВУЮ, — անիլինովի ներկից. որը բացվում է խկոյն, երբ գրչի ծայրն ջրի մէջ է թաթախվում, և դառնում է կատարեալ թանաք:

Այդնպէս փիտիոն յա-խոննական թանաքամանի մէջ ածուծ են քանի մի կաթիլ ջուր, և լինում է կատարեալ թանաք:

Ըհա յառաջ ենք բերում սորա վնասակարութեան ողորմելի գոհը:—Պերմանիայի մի քաղաքում, զիմ նազիայի վեցերորդ զատատան աշակերտը ունէր այդ յա-խոննական գրչի, մի օր գրելու միջոցին իւր անզգուշութիւնից՝ ցայթեց քանի մի կաթիլ թանաք շրթուներէի վերայ. որ իսկոյն փոքրագոյն ուռոյցքներ եղև. որ շարունակ երեք տիւ և զիշր սարսափելի շարչարանքներ կրելուց յետոյ՝ մեռաւ ողորմելի

խեղճ պատանին զուր տեղը զոհ գնալով...: Վանու-
րոյ անհրաժեշտ պարտք ենք համարում, զգուշացնել
նա ևս մեր սիրելի ընթերցողաց. որ բոլորովն հե-
ռանան այդպիսի «Յաւիտենական — Քիմիական» ան-
ւանեալ բոլոր թանաքներից:

54. Հետազոտական հաղորդակցութիւնը

Եւրոպայի:

Համաձայն հաշուարարական հետազոտութեանց,
Աւստրիայի առևտրական նախարարութեան եւրոպա-
կան թագաւորութեանց մէջ, տէն Բ 1000 քնուէն
ընկնում է հետազոտ. հետեւեալ հաշուով, — Եուէյ-
ցարիայի մէջ՝ 1006 (հետազոտ.) Նիդերլանդիայի
մէջ՝ 616: Վելիփորրիտանիայի մէջ՝ 561: Բելգիայի
մէջ՝ 537: Վիրտեմբերգի մէջ՝ 474: Նորվեգիայի մէջ
433: Իերմանիայի մէջ՝ 314: Նուէցիայի մէջ՝ 306:
Իտալիայի մէջ՝ 243: Իսպանիայի մէջ՝ 237: Աւստրիայի
մէջ՝ 202: Իտալիայի մէջ՝ 188: Բուսինիայի մէջ՝ 188:
Աւստրիայ — Վենդիայի մէջ՝ 178: Յունաստանի մէջ՝
136: Արքիայի մէջ՝ 128: Իսպանիայի մէջ՝ 76: Պոր-
տուգալիայի մէջ՝ 75: Տաճկաստանի մէջ՝ 61: Լ
Թուրաստանի մէջ՝ 41:

55. Երկրաչնդիս վերայ նամակաց թիւը:

Ամենայն շաբաթ, միջին հաշուով տարածվում է
աշխարհիս մէջ՝ մինչև 5,320,000 նամակք, այն է
ամեն մի ժամում, 360,000 նամակ: Ահա այս չա-
փազանց թուի հաշուով՝ երևում է որ, ամենայն
տարի գործ են ածում, 15 միլիոն ֆունտից աւել
թուղթ. ի նկատի ունենալով, ամենաթեթեւ քան
ամեն մի նամակի:

56. Կորաղիտնի, Բուստի (Մարման-ի)

գտնելը:

Եսպանացւոց լրագիրները հաղորդում են, — որ
չափազանց զօրեղ յաջողութեամբ՝ բուստերը (Եսպանա-
նէրը) հանում են հետեւեալ ծովերից. — Ուս, Տոլուս,
և Բիլբո. Բայց ամենալաւ բուստը է Տոլուս ծովի մէջ:
Բաւական ենք համարում (ասել որ անցեալները
գտան այնտեղ մի կտոր բուստ որի երկարութիւնն
էր հինգ ֆուտ:

57. Կարմիր գինու ներկած լինելը

Ճանաչելու հնարք:

Սևնահասարակ միջոցով ճանաչվում է, Կարմիր գինու մաքրութիւնը այն է՝ սաստիկ ժածահարել գինին. եթէ երևայ նորանում սպիտակ փրփուր՝ ուրեմն գինին ներկած չէ. իսկ եթէ փրփուրը լինի կարմիր՝ նա անշուշտ ներկած է: Գինին ներկուեն զանազան տեսակ պտուղներով և ծաղիկներով, որոնցից շատերը բոլորովին վնաս են առողջակազմութեան:

58. Տաք եղանակում իւղի պահելու

հնարք:

Ընկալալիս, (тапe. пeч) որի մէջ կայ իւղը՝ Տաք կատր է ծածկել հողէ խոր ամանով. այնպէս որ իւղին թարձր լինի, յետոյ ի միասին վախճալով:

Թաց քաթանէ շորի մէջ. և դնել այնպէս տեղ՝ որ տեղ կլինի հակառակ հողի. (СКВОЗНОЙ): Ահա այս հնարքով իւղը պահվում է երկար ժամանակ անվնաս և նոր:

59. Երկար միջոց նոր վարունգ (խիար)

պահելու հնարք:

Պէտք է քաղել ամենալաւ վարունգ. այնպէս որ, շաղը՝ վրէն լինի. յետոյ վերցնել ամենազգուշութեամբ լուանալ փափուկ խողանակով, (шетка) որ նորա վրէն չմնայ ոչ մի շամանդաղ (շիւշէ): Երբ բոլորովին կչորանայ՝ ամեն մի վարունգին պետք է քսել ձուի սպիտակում. այնպէս որ, չթողնել ոչ մի տեղ որ ոզր մտնի: Սորանից յետոյ՝ երբ որ բոլորովին կչորանայ՝ օդի մէջ պետք է կտտել թելով միակից. որ պէտք է շատ չոր լինի, ահա այսպէս վարունգները կարելի է պահել կանաչ մինչև ձմեռուան մէջ:

60. **Կաշուից՝ ձեռնոցների մաքրելու:**
Հնարը:

Պէտք է 3 ունց օձաւոր փրփռացնել 2 ունց
СЪЛИНОЙ, — Էէլիէ ջրի մէջ, և 1 Էրեմոյ ջրալէ
АММОНИАКУ, — ամոնիակի մէջ. յետոյ վերցնել ամե-
նափափուկ ատուր (ФЛАНЕЛЬ) կտոր ու սրբել պատ-
րասաած գեղովն պնդան միջոց՝ մին և որ մաքրուի,
ձեռնոցների ողջ բծերը:

61. **Ոսկէ շղթաների մաքրելու գիտք:**

Վերցնել գինու մի փոքր շէշ. անել նորա մէջ
մինչև կեսը տաք ջուր. յետոյ աւելացնել մի փոքր
փրփռացրած օձաւ, և կրի փոշի. յետոյ խփոյն դրել
շղթայն շիշի մէջ. ու որքան կտրելի է լաւ ժածա-
հարել քանի մի անգամ. սորանից յետ՝ հանել շղ-
թայն և լուանալ մաքուր ջրի մէջ. ու չորացնել:
Ահա այս գեղովը՝ շղթայն սխտւմ է մաքրուելով
լաւ փայլել:

62. **Սրբոյն Գրիգորի լուսաւորին մե-
րոյ սոսկալի չարչարանացն և մուսն ի
վերապն տօնի օրն, պատշաճ է արդիօր
ցմե՛նեզ գրիգորներ ի տօնախմբութիւնը**
առցարս միջոց կոտորել:

Լուսաւորին մերոյ Ս. Գրիգորի չարչարանաց տօ-
նը կատարում ենք միշտ ըստ կանոնի Ս. կեկեղեցւոյ,
մեծի պահօցի հինգերորդ կիրակէի շաբաթ օրը: Այդ
օրում մեր Հայքը, որոնց անուանքը լինում է Գրե-
գոր՝ երեկոյան մեծ խնձոյք պատրաստելով փառա-
ւոր տօներ են կատարում սխտւմ են շատ աներում
թմբուկների ու նուագարանների ձայները թնդաց-
նելով պարել, երգել և զուարճանալ... որ յայժ ան-
տեղի է, և ընդդէմ մարդկային խղճի, երեւակայե-
ցէք ինքներդ ո՞վ Հայ եղբայրներ, որ այդ օրը մեր
Լուսաւորիչ ս. Տօրը, ամենատեսակ անտանելի չար-
չարանքներ և տանջանքներ տալուց յետոյ՝ ձգել են
խոր—վերապի մէջ այդ օրը մեզ համար խնայ Խնայ
է, սաւրբ է, և ամենայն պատիւտանալով պահպանելի
օր՝ և մեծ կարգի. և ո՞ր թէ անամօթաբար հըր-

ճուել և զուարճանալ, երգել և պարել, որպէս լինում են անտարբեր անձինք: Երևակայեցէք աղաչեմ և այն որ այդ երեկոյին շատ հանդէսաւերեր՝ մին և անգամ լուծում են և մեծի պահոց պահքը. ուրեմն պարտական են մնում երկու կողմով. մինը որ քակտում են պահքը՝ իսկ միւսը, որ երախտամոռ ենք գտնվում առ այն սուրբ Լուսաւորիչն՝ որին պարտական ենք մեր բոլոր սրտով: Մենք չենք ստում սոնախմբութիւնը, այլ մենք սիրում ենք նորան ամենահամեստ կերպիւ. և խորհուրդ ենք տալիս ամենայն խոնարհութեամբ, կատարել Գրիգորներին ասուածքն-էրեմիայի՝ միշտ ընդ ի վերապէս տօնի օրն, որ աւելի յարմար է և լաւ թէ տօնին նայելով՝ թէ ժամանակին, և թէ եղանակին. չգիտեմ թէ նչ մէկ խիստ հարկաւորութիւն, կամ թէ նչ մէկ պարտ ու պատշաճ հարկաւորութիւն կայ որ ամբողջ մեր Գրեգոր անուանեալ եղբայրները՝ այն օրն են կատարում. մենք կրկին և կրկին խնդրում ենք և պահատումք որ աշխատեն այդ անտեղի և անհամ սուգորութեամբ տօնակատարութիւնը՝ բոլորովին թողնել. այլ տօնախմբել յիշեալ տեղի վերապէս կամ վերջապէս Գրեգոր Նշխարացոյ տօների օրերում. որ խիստ յարմար են և գեղեցիկ. և ոչ թէ ճարտարանոց և պանդոնոց օրն. որ մենք Հայերս, պե՛տք է

լինենք ընդհակառակը պարտ, և պե՛տք է պահենք այդ օրը սրբի: Թէ որքան տխուր և դաճն են լինում բանիմաց անձինքների համար այն միջոցն՝ երբ այդ զուարճութեանց մէջ մտաբերում են մեր Լուսաւորիչ Հօր՝ անսոսնելի չարչարանք և սոստիւելի գործողութիւնք. որ ամբողջ օրը անցած է մեր ս. հօր համար սոստիւելի պանդոնոցներով իսկ մե՛զ համար՝ ահա անցնում է խնդութիւնով... բայց մի թէ այդպէս է երախտագիտութիւնը... ցանկալի էր իմանալ, թէ՛ արդեօք որ ազգի մէջ սովորութիւն կայ իւրեանց հօր չարչարանաց տօնի օրը՝ զուարճութիւն կատարել...: Հարկաւոր է մտածել և սթափուել. չէ՞ թէ վայելում ենք հաց՝ ապրելու և հոսածելու համար: Ո՞վ հայ, ժամ է և ժամանակ աշալուրջ լինես զուինքդ, ճանաչիր քո չքնաղ Ս. Եկեղեցոյ տաճրիճ և գեղեցիկ կանօնները. պահպանիր զու նրբութեամբ իմ սիրական և հասցրու աղաչեմ. թո՛ղաւակաց և թո՛ղանց՝ ամենայն անարատութեամբ:

ՄԱՏԵՆՆԵՐՈՒԹԻՒՆ

64. Պատմութիւն Աթողիկոսաց Եջմիածնի Ի Սիմէօնէ մինչև Գրիգորիանէս Ը. ամբ տեառն 1763—1831 Գրեալ Ի Սսերայ Մագիստրոսէ Մսերեանց. Մոսկուա 1876.

Ազգային գրականութեան գանձարանը բարեբաղդ է լինում երբ մտնում է իւր մէջ նորանոր գեղեցիկ մտտեանք։ առաւել ևս յայնժամ երբ լինում են, մատենագրութիւնք անցիցն անցելոց։ Ընդեալ 1876 թուին, մեծաւ ինտրութեամբ ինչ դունեց Հայկական գրականութիւնը, յիշեալ պանծալի գիրքը իւր անխոնջ մշակ, ի Տէր Հանգուցեալ բազմարգին քերթող Սսերայ Մագիստրոսի երկասիրութիւնից. որի առատատուր գրականական անջինջ երանախօր չպիտք է մոռացուին երբէք ամեն մի բանիմաց Հայի սրտից... Գիրքս այս, լինելով

ամենանշանաւոր գեղեցիկ պատմագրութիւն՝ պարտք եմք համարում մեզ ծանօթացնել մեր սիրելի ընթերցողաց նորա յովանդակութիւնը, հանդերձ և մեր անաչառ քննողական հայեացքը. — Գրքի հրատարակին է բազմերախտ հեղինակի որդին, Մեծ. Զարմայրն Մսերեանց, որ սկսում է գեղեցիկ յառաջաբանութեամբ նուիրել ազգային պատմութեանը. տեղի ևս հարստացնելով իւր կողմից, այն է երկու այլ ձեռագրերից ևս գետեղած է ի միասին։ Գլ. Ա. 1763—1780 Ընտրութիւն Սիմէօնի է հառաջ ինտրութիւնս — Աբրահամ Վարդապետ Աստուածաբանի և Գրիգորիանէսի պատմութեանը ի Կ. Պոլսիս։ — Աստուածաբան Աբրահամ Վարդապետի Սիմէօնի է որոշման ինտրութիւնս ինչ Ախտուղ էջմիածնի. Ս. յա մտնիս մէջ յոյժ բաղաւորութիւն է մեզ տեսնել Հաշխարհիկ բազմարգին հայրապետին մերոյ՝ Տ. Սիմէօնի Աստուածակամ նարութիւնը. նորա գեղեցիկ և վառ ժուռն եռանդով սկսեալ գործոց պատգմելը, կոնգակը, ևս և 1775 թ. Յունկարի յ2 էն սկսեալ մեր եկեղեցւոյ Տօնացոյցի գեղեցիկ կարգաւորութիւնն։ — Փառք և պարծանք քո սուրբ ոսկերաց, ո՞վ անմահ հայրապետդ մեր չքնաղ Սիմէօն և հանդիստ արքայութիւն քեզ ո՞վ քերթողդ Հայաստանի Սսեր որ քո մահումնից յես մենք տեսնում ենք քո գեղեցիկ երկասիրութեանց մէջ այսպիսի երանաւէտ

Վեհ անձանց նկարագրութիւնք, և սրպէս...: Հրո-
 վարտակ Կայսերութեան Ռուսաց Եկատարինեայ Բ-ի:
 Մահ Սիմէօնի: ԵՊ. Բ. 1780—1799. Ժողով յեջնու-
 ծին վաս ըստրուելուն Առաջադրուած Գաղտնի Գաղտնի-
 լիւն: Սահակ և Միքայիլ Եպիսկոպոսոյ: Պարճատ Է յիշողու-
 ինչոյ ի ինչ Բան անուան Առաջադրուած յեկեղեցին Հայոց Օսմա-
 նեան Տէրութեան: Չափարկա Պարս. Կ. Պոլսոյ: Ս. յս մասունն
 տարաբաղաբար փառաւոր տեղ է բռնում մարդկային
 յիւարական սովորութեանց գլխաւոր մի ճիւղը, այն է՝
 չիւր. կարգալով մի առ մի այս պատմագրութիւնը՝
 անսնում ենք. որ Կ. Պոլսի Պատրիարք Չափարիայ եպիս-
 կոպոսը նախանձուց պատուում է, որ իրեն կաթողի-
 կոսութեան Հրաւիրեցին. ուստի երջանկայիշատակ
 անմահ Սիմէօնի վերանորոգեալ նոր տպեալ տարա-
 ծուած Տօնացոյցը հրամայում է ժողովել և արգե-
 լում է ծածկաստանի բոլոր եկեղեցիներում նորանով
 վարել և շնորհնել Առկասին կաթողիկոս. ու նորից
 սկսում է տպել ինքը հին Տօնացոյցը, հանդերձ
 պարտաւելով Տօնացոյցին Սիմէօնի: Ահա այս բոլոր
 կրից արարքը իմանալով Առկաս կաթողիկոսը խո-
 նարհական նամակ է գրում, յայտնելով որ ինքը
 դեռ ևս չէ բարձրացել կաթողիկոսութեան Աթոռի
 վերայ. հրաւիրեց Չափարիային ի կաթողիկոսութիւն:
 Նամակը ստանալուն պէս Չափարիան հրամայեց ըն-

դունել Առկասին կաթողիկոս՝ և յիշել նորա անու-
 նը ամենայն եկեղեցիներում, և զՏօնացոյցը Սիմէօ-
 նեան նորից թոյլադրեց որ ամենքը նորանով փա-
 րութիւն Ահա չիւր աշխարհիս մէջ ի՞նչ հրաշագործու-
 թիւններ է անում, սկսեալ յետին աղքատաց մինչև
 վերին հարուստը, հարստից մինչև հոգևորականը՝
 շփոթուած ենք թանուում կրից մօլութեան մէջ.
 ամօթ դոցաւ, որ փոխանակ Բրիտաննութեան պար-
 տաւորութեանց՝ գործում են ընդ հակառակն և վեր-
 ջապէս որպէս կամին և անձնական շահը, անձնա-
 կան կիբքը՝ ախ, Հայրենեաց վերայ են փոխաբե-
 րում. ո՛վ սուրբ արգաւանդ հոգի Իջման Միաճնի,
 ներիր աղաչեմք այդ մոլորեալ ոչխարներին, որոնց
 մտադրութիւնք կատարուած են և անցած՝ որպէս
 դարնան ծայկիք: Առաջադրուած նախնայոց — Կաթողիկոսին
 խորհրդոց պատիւն յառաջ Առաջադրուած — Կաթողիկոսութեան
 յողափս Բուռոյ անդամայ Աննիտոսի — Ծախցար ինչ աղփս
 Հայոց ի Հայրապետութեան Առաջադրուած յասեղ յառաջ է
 դալիս տարաբաղաբար Առկաս կաթողիկոսի յըն-
 թացս 19 ամսց ամենայն մասում անհոգութիւնքը,
 ահա պոպէս է վերջացնում բազմարդիւն հեղինակը,
 — օ... որովք և բարձին զեկական շուք և զվայել-
 չութիւն Աթոռոյն *)» Էջրովարտակ Կայսեր Ռուսաց:

*) Shu Quind, Կամ. 1876. 11 էր:

Գլ. Զ. 1801. Հասարակական Յովնեֆ եպիս. Արքեպիսկոպոս ի հա-
լուղ ինքուր-Վերան: — Ճանապարհորդութեան Յովնեֆայ: — Հասարակ
նորա ի Տիֆլիս, հիւանդատանն եւ Տահն: — Հրատարակչին էջ
Յովնեֆ եւ հասարակութեան Վրեգոր վարդապետի:

Գլ. Է. 1801. Նրբորդ անգլ. ընտրութեան Վանիէլի
ի հալուղ ինքուր-Վերան: — Անաստաս անտրոսկայ ան Վանիէլի:
Ջանս Վանիլի ի յարկապէս ի զեւայ Վանիէլի գալուստն:
Օժտան Վանիլի ի հալուղ ինքուր-Վերան: Աղճառի եւ արարչայ
նա-Վերան ընդ անաստիս արեղիս, եւ ջանս Վանիլի վաւերացու-
յանէլ ի հալուղ ինքուր-Վերան իարս:

Գլ. Ը, 1801—1802. Նրբիւղ Նիքիճայ ի Վրեգոր վար-
դապետի Աղ զերճանայ: — Ջանս Նիքիճայ գնայ ի Սահրաս
ժամանակայ լինելոյ շժճան ժասանգին Վայսերու-Վերան Ռա-
սայ եւ ժամանակորէն յուսանելոյ ի հալուղ ինքուր-Վերան Վա-
նի: — Հասարակութեան Նիքիճայ յաստջնարդութեան Հայոց
ի Ռասիայ: Հասարակութեան Վանիէլի ի հալուղ ինքուր-Վերան:
— Միքէլ Տաւանի էջՅովնեֆ ի հալուղ ինքուր-Վերան Վանի:
— Օժտան Վանիէլի: — Քաղաած Սրանդորդանիս վճարչն:

Գլ. Թ. 1802—1805. Ժողով գոսարեալ ի Վանիէ եւ
հոգնակապ նորա: — Վա, Վանիէլի էջՅովնեֆ: Ջանս Յովնեֆ-
նեա եպիսկոպոս ի գործ քնել զգորութեան Հրատարակչին Վա-
նիէլի: — Վանիէլի եւ Վանիլի հալուղ ինքուր յերևան ան Ռանն
Պարսից: — Կրէնն զորանայ Վանիլի: — Մեկնիլ Վրեգոր եւ Ներ-

նեա եպիսկոպոս յէջՅովնեֆ: — Արգելումն Վանիէլի ի խ-
սարչին սենիլի եւ գերծումն Տորասայ նորա: Ահա այստեղ
է փայլում ամենավերին խղճի ըննդէմ արարք
Վալթի, անմեղին Վանիէլի Հայոց կաթողիկոսի, ի հո-
գորհուրելի համարձակութիւններ է գործ գնում ան
ընտրեալն եւ օծեալն Վանիէլի զԱրքեպիսկոպոս զորայ
Ռասայ ի վերայ Նրեանոր: — Աստրումն Վանիէլի ի Մարտի-
չայ: — Թաղել Վանիէլի ի Մարտչայէն Սյս զլինի
վերջումը կայ մի պիտանացու ծանօթութեամբք տե-
ղեկութիւն Հրատարակչից, որ յոյժ հետաքրքրու-
թեամբ սպասում ենք երբ եւ իցէ լոյս հանն ում
մտ որ զանուի այն անծանօթ պրբինական նամու-
կագրութիւնն Վանիէլի օրով:

Գլ. Ժ. 1806—1809. Փոքրիւր-Վերան Ռանից յերևան:
— Աղապումն Վանիէլի եւ որայ նորա յերևան: — Վանիլի հա-
լուղին ի ծառիս: — Վանիէլի եւ Վանիլի աստղ Սարդարին:
Վանիէլի ճանաչի օրինաոր հալուղին Հայոց: — Հանդիսաոր
Տապ Վանիէլի յէջՅովնեֆ: — Վայս Ներսէս յէջՅովնեֆ: Հի-
անարութեան Վանիէլի եւ գերծումն Տորասայ Վանիլի:
Մահ եւ լաղումն Վանիէլի:

Գլ. ԺԱ. Ը նորութեան Նիքիճայ ի հալուղ ինքուր-Վերան:
Քարծաղայութեան Ներսէս եպիսկոպոսի: — Մահ Վանիլի: — Ան-

Քրիստոսի Ասար Աստուածնի Տիմանց, ո՞վ էր-
ջանկայիշատակի անմահ, Հայրապետ, փայլք և պար-
ծանք քառակերպ: Վաստասութիւնս Յովհաննիսի
ի կաթողիկոսութիւն և օծումն նորս: Քարձ էլ իմիր-
զեանի յեջմիածին: Մահ եկրեւմ կաթողիկոսի: Ահա
սորանով վերջանում է դիրքը: Յետոյ առաջ են գա-
լիս Չե կոնկակք, հրովարտակք, և այլն, որոնք ամեն
մի բանիմաց հայի խորին հետաքրքրութիւնը պիտի
գրասեն մե՞ծ է այս գործ և աշխատանք՝ որ կարողա-
ցել է ձեռք բերել հանձնարար հեղինակը, հարս-
տացնելով միանգամայն ազգային գրականութեան
մատենագարանը: Սոցա վերջաորութիւններից յե-
տոյ գրուած է յաւելուածք:— Ա. Աշխարհագրական և
Պատմական Գնահատման Ի վերայ Արտասն էջմիածնի, յօրի-
նէսոյ Ի յե— հարցման և պատասխանոյ:— Այս գեղեցիկ
երկասիրութեան մէջ, բացի ամենակարևոր առատ
տեղեկութեանց՝ տեսնում ենք մեր ընդհանուր կա-
թողիկոսաց անուանքը, նոցա տարիքը, ևս գտնում
ենք և ամբողջ շարք Հայ կղերական հեղինակաց,
այն փարեի հոգեւորական անձանց՝ որք ծաղկեցան
ի պարծանս Ազգիս անցեալ դարերում: Թէ՛ որքան
հարկաւոր են այս տեղեկութիւնք՝ անշուշտ կզգայ
ամեն մի ճշմարտասէր անհատ և դոհոթիւն կեան-
տաքանէ անմահ, Աստուածաբանական անուանք: Երեսք

262, 263 և 264, ակնյանդիման երևում են տարա-
բազմաբար Ղուկաս կաթողիկոսի անուսումնասիրու-
թիւնքն: Իսկ մնացեալ ամբողջութիւնը այս յաւե-
լուածի՝ խորհուրդ եմք տալիս ամեն մի բանասէր ան-
ձանց՝ անշուշտ ընթեռնուլ: ուր յոյժ հետաքրքրա-
կան տեղեկութեանց հաղորդ կլինին: Գիրքս այս
վերջանում է հետեւեալ գեղեցիկ տեղեկութեանք,
— Ծանօթութիւնս զխրատանց, պատուոյ և իշխանութեան
Ծայրագոյն պատրիարքին Հայոց որ Ի ս. էջմիածնի, նոյն հե-
ղինակի: Այս վերջին հատուածը ևս յոյժ կարևոր
տեղեկութիւն է ամենայն գրասիրաց և հետաքր-
քիր անձանց համար: Ահա ներկայացնելով
մեր սիրելի ընթերցողաց այս ամենայն գո-
վութեան արժանի գրականական վաստակը՝
Հայկական անխոնջ քերթողի երկասիրութիւնից,
— այն է՝ անմահ Մսերայ Մագիստրոսի Մսերեանց՝
ասում ենք, — մեծ փառք է և պատիւ Մսերեանց
տոհմին, որ Ազգային կրօնական պատմութեան վեր-
ջին գարը՝ մանրամասնաբար մշակելով նուիրեց Ազ-
գային գրականական դանձարամին այս թանգագին
աշխատութիւնը: Բնատի խորհուրդ ենք տալիս ամե-
նայն բանասիրաց ունեւալ այս շքնաղ մատենագրու-
թիւնը ի բնանց գրասեղանի վերայ: Գրքի դիրքն է
մեծագիր 322 էրեսք, դիմ է առ այժմ 2 րուր. արմօ

սպասում են հետևյալ մանկրանային 1878 թ. 302

63. Փոխումն յատնացս

ԱՌԻԿԱՍՈՒ Գ. ՊԱՆԿԱՋԱՐԵԱՆ:

Տարութեամբ սրտի հաղորդում ենք մեր ընթերցողաց, որ անցեալ 28 ն Մայիսի 1878 ամի, Հայկական գրականութիւնը ապարդիւարար զօրուեց իւր մի նշանաւոր Հայկազն անխոնջ անդամից. այնպիսի մի երդուեալ անդամից՝ որ սկսեալ ամբողջ 38 տարի շարունակարար ծառայում էր Հայկական գրականական տքնութեամբ.— պատուական այրս այս՝ է՝ մեծապատիւ պ. Առկասն Գ. Պարագարեան, խմբագիրն Վերջալոյս Արարատեան օրադրոյն Զմիւռնեոյ, որի մահը համարուել է անշուշտ մեծ կորուստ. ուստի կարելոր եմք համարում մի քանի խօսք ասել նորակենսագրութիւնից:

Մեծ Առկասն Պարագարեան իւր դոստոյարան կութիւնը և Հայկական գրականութեան ընդարձակ գիտութիւնը բարեբաղդարար ստացել էր Արժանաշիշատակ Յէր Յովհան քահանայի Միրզայեան վասնանդեցոյ մօտ. էր աշակերտակից և ընկեր՝ ի Տէր հանդուցեալ անմահ քերթողի, Սեբայ Մարգար

րախ Մանրեանց Զմիւռնացոյ: Գիտէր նա ևս Յունարէն, Վաղգեբրէն, Անգղեկերէն, և Իտալիերէն: Իւր երիտասարդութեան օրերում Ազգային դպրոցական խնդիրներն մէջ մեծ օգուտներ է հասուցել, մինչև որ, 30 տարեկան հասակին մէջ՝ այն է 1840 թ. սկսեց խմբագրել և հրատարակել Վերջալոյս Արարատեան վերնագրով մի պատուական լրագիր, որ է՝ ամենաառաջին լրագիրն ոչ թէ միայն Հայոց՝ այլ և ամբողջ Տաճկաստանի ազգայնութեանց. որով կոչուեցաւ «Անդրանիկ օրագիր Զմիւռնիոյ Քաղաքական, Բանասիրական և Առևտրական գիտելեաց և այսպէս Հայոց գրականութեան մէջ՝ լրագրութեան հիմը դրեց. ու այնպէս անվտանգամբ շարունակարար խմբագրեց և հրատարակեց մինչև իւր վերջին կէտը, այն է՝ ամբողջ 38 տարի:

Ահա այսպիսի մի ազգային անդամի կորուստը և անակնկալ մահը մեծ ցաւ է և կակիծ ամեն մի մրտածող բանասիրաց սրտի համար: Հանգուցեալ թողեց տիրութեան մէջ ոչ միայն զբանասիրաց զարբ, զգոտանոր և զհեռանոր բարեկամը՝ այլ և իւր պատուական ամուսինը, հանդերձ մի չափահաս ուսումնական որդով. մահը եղել է յետ ութ օրեան հիւանդութեան. թաղման հանդէսը եղել է յոյժ մեծ բազմութեամբ. տեղւոյն Առաջնորդը խօսել է

գեղեցիկ դամբանական: իսկ որ ծարուծիւն Մարե-
լեանը կարգացել է դամբանական ազգու՝ ճանա-
մա Մենք ևս մեր կողմից ցուցակական արտիւստու-
ենք, — հանգիւնս արքայութիւն թե զ՝ ո՛վ, ազգային
հարագատ ճշակ և թանկ հայրամուկաց արժանի
ժառանգ:

**65. Բնութիւնը 1878 թ. Հայոց օ-
րացոյցների Էջմիածնական և Տէր Աւ-
րահամեանի**

Անցեալ տարի, մենք համաձայն Տոնացոյցի Լա-
յաստանեաց օտար Եկեղեցոյ, ամենայն անաշուու-
թեամբ քննեցինք 1877 թ. չորս օրացոյցների ան-
տերեղի սխալները: *) որոնցից այս 1878 թ. շերե-
ւեցան երկուքը: այն է՝ Պ. Ա. Էնֆիաճեանցինը
և Պ. Աղունակեանցինը: Փառք Աստուծոյ որ նորա
մաճոցն առ ան ի իր զշան իրոց մտաւնու-
նոց ի յիր զսխալ մանաւն մանկուսումս:

*) Տես «Մատիկ Ընտանեաց» 1878 թ. 106—118 եւ 120
երեսները:

իրեանց սխալներով հանդերձ՝ անհետացան: Իսկ էջ-
միածնական և Տէր Արքահամեանի օրացոյցքը՝ երե-
ւեցան և հրատարակուեցան այս 1878 թ. դար-
ձեալ օրացոյցներով լի՝ ուստի՝ յանուն Ընայաստա-
նեացոյց օ. Եկեղեցոյ | սրբութեան պարտաւոր ենք
համարուած մեզ, ակնյանդիման կացուցանել յիշեալ
երկու օրացոյցների քննութիւնքը՝ թէ այս 1878 թ. —
այս Էջմիածնական Օրացոյց 1878 Լ: Յունուարի 3 զրած
է՝ Հոկտեմբ. ամ. Երգէին մանկուկքն. որ սխալ է
այլ պետք է լինէր՝ Հրց՝ ապշ. աղջ. դկ. Աստուած
հարցն մերոց: Արովհետեւ այս ասպաշխարութեան
հարցը վերջանում է՝ Աստուած հարցն մերոց՝ շարակա-
նով. ուրեմն ի՞նչպէս կարելի է թերի թողնել և
յետ դառնալ սկիզբն: Յունուարի 4 զրուած է՝ Հո-
կտեմբ. ամ. Փառաւորեալ յախտեան. որ պետք է լի-
նէր՝ Հրց՝ ապշ. աղջ. ամ. Երգէին մանկուկքն: Բոլո-
րովին միմեանց հակառակ. բայց մի թէ ներելի է
այդ: Փետրուարի 24 որ բուն բարեկենդանի վերջն ուր-
բաթ օրն է յերեկոյին զրուած է՝ Լոյս զուարթ.
որ անկարելի է, էս էր պակաս փառք և պարծանք
Էջմիածնական Օրացոյցին: Ապրիլի 1 որ՝ Վրի-
գորի Լուսաւորչին մերոյ սոսկալի շարչարանացու
մուան ի վերապէս սօժն է կիրակի է՝ Հէ՝ անշանու-
կած, որ պետք է լինէր: 18 Գշ. զրուած է՝ որ

չպե՛տք է լինէր: Յուլի 29 Շր. որ Վ. Քաղէօսի առաքելոյն մերոյ և Սանդխտոյ կուսին տօնն է, կիրակի է. չէ նշանակած: Նոյեմբերի 4 որ Բաղնայն սրբոց Տնոց և նորոց յայտից և անյայտից տօնն է, կիրակի է. չէ նշանակել: 11 Շր. որ Վ. Հրեշտակապետացն Գաբրիէի և Միքայէի և ամենայն երկնային զօրացն տօնն է, կիրակի է. չէ գրած: 27 Յշ. դրուած է Թղերիկոսի Աբահանային և երկուց բիւրուցն որք այրեցան յեկեղեցին Նիկոմիդացւոց. որ չպե՛տք է լինէր: Դեկտեմբերի 21 Յշ. դրուած է Նիկողայոսի սքանկազօրծ հայրապ. Զմիւնեիոյ որ ընդ հակառակն, պե՛տք է լինէր: Թղերիկոսի քահ. և երկուց բիւրուցն որք այրեցան յեկեղեցին Նիկոմիդացւոց: Ահա տեսնելով այսպիսի սխալները՝ մարգարէական, ակամայ ընկղմվում է խորին տխուր թեան և մտածութեան մէջ. վասն զի, այնտեղից որ պե՛տք է ստանանք շոյս, ապա զուրկ ենք, և որքան անհասարակ անտու՛մ ենք ընդ հակառակն անզգուշութեամբ աններելի սխալներ:

Եւ Վ. Տէր Աբրահամի և Գրայոյ 1878 թ. Մարտի 13 որ է Եժով Անուանակոչութեան և թրեփատութեան Տեան մերոյ միտոսի Բրիտանոսի 8 էրուական տօնը՝ կիրակի է. չէ գրած, թողնում ենք գատել ընթերցողաց 8 թէ՛ սրբան անմերելի է, այս

սխալը: Մեղրուրի 2 փոխանակ Պիտոսի դրուած է Պիտոսի Ապրիլի 1 Շր. որ Վ. Գրիգորի Լուսաւորչին մերոյ սովախի շարձարանացն և մուսնի վերստան տօնն է, կիրակի է. չէ նշանակել: 18 Յշ. դրուած է. կիրակի. որ չպե՛տք է լինէր: Յուլի 17 Շր. որ Վ. Գրիգորի Լուսաւորչին մերոյ երն ի վերստան տօնն է, կիրակի է. չէ նշանակած, որ պե՛տք է լինէր: Յուլի 29 Շր. որ Վ. Քաղէօսի առաքելոյն մերոյ և Սանդխտոյ կուսին տօնն է, կիրակի է. չէ նշանակած: Նոյեմբերի 4 որ է Բաղնայն սրբոց Տնոց և նորոց յայտից և անյայտից տօնն է, կիրակի է. չէ նշանակած: 11 Շր. որ Վ. Հրեշտակապետացն Գաբրիէի և Միքայէի և ամենայն երկնային զօրացն տօնն է, կիրակի է. չէ գրած: 27 Յշ. չէ գրել Ենդոսի և Դոմնայի կուսանաց անուանքն, որ պե՛տք է լինէր: Դեկտեմբերի 2 Շր. որ Վ. Սրբոց առաքելոց և առաջին Լուսաւորչացն մերոց Քաղէօսի և Բարթուղիմէոսի տօնն է, կիրակի է. չէ նշանակել: 21 Յշ. աւելի է գրել Ենդոսի և Դոմնայի կուսանացն որ չպե՛տք է լինէր այդ օրը. այլ որպէս յիշեցինք Նոյեմ. 27-ին:

Ահա այսպէս (մեր) քննութիւնից երեւեցաւ, որ 1878 թ. Եղմիածնական Օրացոյցի մէջ անզգուշութեամբ չէ նշանակուած 4 հասարակ կիրակիներ,

աւելի է գրուած 1 կիւրակէ. 2 օրում ապշ. շարական-
ները գրուած են անուղիղ. 1 օր սխալմամբ գրուած
է 1. ցս զո՛ւարթ: 1 սրբի անուն սխալմամբ աւելի է
գրուած, և 1 ամբողջ տօն փոփոխել է իւր տեղից:
Իսկ Յ. Տէր Արրա հասկանի Օրացոյցում չէ նշանու-
կուած 1 Տէրունական կիւրակէ. 6 հաստատ կիւրա-
կիներ. 1 սրբի անուն այլապէս. 1 օր գրուած է
աւելի կիւրակէ. 2 սրբոց անունք փոփոխուած են
իւրեանց տեղից:

Ներկայացնելով ահա բանասիրաց անաչառ դա-
տաստանին վերոյիշեալ 2 օրացոյցների խմբագրաց
թուղթիւնները և անպատասու թիւնները ընդդէմ
հանձնի Տօնացոցին Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ
ատում ենք. — որ ի՛նչ ահռելի համարձակութիւն է,
այսպիսի կրօնական ամենափափուկ դործի մէջ՝ աղա-
ւաղութիւն անել. . . չէ՞ թէ՛ օրացոյցները պէտք է
իւրեանց ուղղութիւնը ամենահարազատութեամբ
պահպանեն. . . այլ ո՛չ թէ միմեանց հակառակ, օրի-
նակի համար օրպէս է՝ Վեկա. 21 օր 3 օրացոյցքը
միմեանցից տարբեր են, մինչև ե՛րբ այսպէս. . . հար-
կաւօր է գնալ ուղի՛ղ և անփշալի ճանապարհով,
ի պարծանս Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ: Այստի
խոնարհաբար խնդրում ենք Ս. Սխօղի Ս. Եղիաճնի
ուսումնական բարձրաբնական անգամեց՝ որ համա-

ձայն իւրեանց սուրբ կոչմանն, դարձուցանել իւրեանց
խորին ուշադրութիւնը այսպիսի անկարգութեանց
վերայ վասն զի ժամ է, և՛ ժամանակ գրուչանալ
այնպիսի բժեղից՝ որք ընդդէմ են կանօնի Հայաս-
տանեայց Սուրբ Եկեղեցոյ: —

**66. Տնութիւն և հայեացք 1. Խ. Լ.
կէս տարվան Օրացոյցի 1878 թ.**

Այս 1878 թ. հրատարակուեցաւ «Մշակ» լրագրի
միջոցաւ, Վ. Խ. Ա. Եկեղեցի կէս տարուան Օրացոյց
ևս 1878 թ. Յուլիսի 1-ից սկսեալ: Այս Օրացոյցը
մենք տեսնք Սուրբուպում Յուլիս ամսում որը կար-
դայով՝ տեսնք որ մեծ թերութիւններով լին ամե-
նահամարում մի բան է. մենք, համաձայն մեր ուղ-
ղութեանը՝ սկսեցինք զրել քննութիւնը, և ե՛րբ վեր-
ջանալով վերայ էր՝ յանկարծ եկաւ մեզ այցելութեան
նոյն ինքն հրատարակիչն ուսանող Պ. Լ. Խ. Ա. Եկեղե-
ցը՝ որ միմեանց հետ արդէն վաղուց ծանօթ էինք,
ի հարկէ միմեանց փափականօք ողջունելուց և եր-

կար միջոց խօսելուց յետոյ՝ երևեցաւ որ Պ 1. 16.
 Ա... եանցն հետեւել է բոլորովին Ռուսաց փոքրիկ
 օրացոյցներին (календарь-ներին) և այնպէս որքան կարող
 զացել է համառօտել է իւր այդ փոքրիկ օրացոյցը
 մենք բացատրեցինք մեր սիրեցեալ բարեկամին, բո-
 լորովին աններելի և անկարելի լինելը՝ մեր Հայոց
 մէջ այնպիսի մի օրացոյցի ուստի խոստացայ թողնել
 քննութիւնը և գրել մեր տեսութիւնը և հայեացքը
 առհասարակ Հայոց և Ռուսաց ծնացոյցների զանա-
 զանութեանց վերայ: Ահա այժմ կատարելով մեր
 խոստումը՝ ասում ենք, — որ առհասարակ Յունաց և
 Ռուսաց մէջ, տարուայ ամբողջ ընթացքում տօնելի
 բոլոր սրբոց անուանքն, ե՛ն անշարժ. այնպէս որ,
 նոցանում ամենայն օր սրբոց տօն է կատարվում.
 և այս պատճառաւ ամեն մի Յոյն, ամեն մի Ռուս՝
 պարտական են ունենալ իւրեանց մօտ փոքրիկ առ-
 ձեան ծնացոյց, — СВЯТЫ: Գեղանում՝ ուրբաթ, չո-
 րեքշաբթի, կիրակի, Ա. Չափից սկսեալ մինչև Յա-
 րութեան Ա. կիրակէն, մի քանի եօթնեակ պահոց-
 ներ, և ամբողջ մեծի պահոցում (բացի շաբաթ
 օրերը) անկարելի է տօնել որ և իցէ մի սրբի տօն.
 բայց Յունաց և Ռուսաց ծնացոյցով՝ այնպէս չէ, այլ
 նոցանում ամենայն օր առհասարակ տօնվում են ան-
 խափան սրբոց տօներ, և որովհետև ամեն մի Ռուս

ունենում է ծնացոյց, — СВЯТЫ, ուստի տպում են և
 հրատարակում և փոքրիկ օրացոյցներ (календарь)
 որոնց մէջ միայն կարելի է պարզ տես-
 նել, որուայ անունները, օրինակի համար, Յունիարի
 10, ընկնում է այս ինչ թուականին՝ ուրբաթ, Փե-
 տրվարի 1 ընկնում է Շաբաթ, Յունիսի 5 ընկնում է
 կիրակի և այն և այն. ևս և Ա. Չափիկը, Հաբար-
 ձումն և այն երբ է լինում այս ինչ թուին: Ահա
 Ռուսաց և Յունաց օրացոյցների ունեցած միմիայն
 և եթ՝ հարկաւորութիւնքը, և այս իսկ առթիւ նորա
 իւրեանց փոքրիկ օրացոյցներում գնում են 1, 2, 3
 սրբոց տօն, այն ևս բոլորովին համառօտ, շնայելով
 որ բազմաթիւ են այսինքն այնքան՝ որքան տեղա-
 ւորում է 1 տողի մէջ, այնպէս որ ամբողջ մի ամիսը
 30, 31 օրը վերջացնում են 1 երկուս և այնպէս
 ամբողջ օրացոյցը աւարտվում է 12 փոքրիկ երեանե-
 րում:
 Երոցա մէջ մինչև անգամ, Աւագ ուրբաթ, Շաբաթ,
 և Չափիկ օրը, որ Սուրբ Յարութիւնն է, դարձեալ
 սրբոց տօներ է կատարվում. ուստի պարտ է ամեն
 մի ոք տօնել ո՛չ օրացոյցը՝ այլ ծնացոյցը, — СВЯТЫ,
 ուր սրբոց անուանքը դրուած են կարգաւ, և գնում
 է շնորհաւորել իւր բարեկամաց տօնախմբութիւնն.
 նոյն իսկ Յարութեան օրում, և այն: և այսպէս

նոցանում մինչ այն աստիճան ժողովուրդական է եղած
 Տոնացոյցը՝ որ ամեն տարուայ մէջ տպում են և
 հրատարակում քանի մի տեսակ Տոնացոյցներ, սկսեալ
 ամենափոքրից մինչև մեծագլորը բայց մեզանում
 ընդհակառակն Տոնացոյցը ժողովուրդական չէ և չէ
 կարող ևս լինել, վասն զի մեր Ս. Եկեղեցւոյ կանոն
 նով բոլոր սրբերը շարժական են, այնպէս է սրտապ
 հում՝ որ յանկարծ Յունկարից շարժում են և տօն
 փում Յուլիան. օրինակի համար, սրբոցն Աւարոսի
 հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին, և Սրբաողոմայ
 օսրկաւազի տօները, կատարուեցան 1877 թ. Յու
 լիան 23 ին շարժ. իսկ 1878 թ. կատարուեցան
 Յունկարի 16 ին երկու շարժի. Ահա այսպէս տեղա
 փոխվում են և տօնվում մեր Տոնացոյցով շատ սրբոց
 տօնակատարութիւնք, և այս առիթներով ժողովուրդը
 երբէք բան չէ կարող հասկանալ մեր Տոնացոյցով.
 որովհետև մեր Տոնացոյցով պարագողք հարկաւոր
 են անշուշտ գիտենալ Տօնարագիտութիւն, ահա որ
 պէս հասարակութիւն՝ ամաչարկում ենք ի նկատմ
 ունենալ, որ մինչև անգամ 10—15 տարի շարունակ
 կաբար Սրացոյցք կամագրողքը, որ գիտեն ի հարկէ
 Տօնարագիտութիւն, մի փոքր անպիտը ընթանալով
 Տոնացոյցի կանոնադիտութեան մէջ, ենթարկվում են
 արամանալի և աննորելի ժողովանոց մէջ ուրիշն ո՛ր

ո՛ր մնայ ժողովուրդը... ահա այս՝ և սոցա նման
 դժուարութիւնքն են, որ մեզանում Տոնացոյցը ժո
 շովուրդական չէ ու չէ կարող եւս լինել:
 Իսկ Ռուսաց Տոնացոյցի մէջ չկայ երբէք և ոչ
 մի սրբի անուն շարժական: Ահա այս իսկ հիման
 վերայ՝ մեր մէջ բոլորովն անկարելի է և աննորելի
 համասօթեալ Սրացոյց գրել և հրատարակել, մեզ չէ
 հարկաւոր երբէք հետեւել այլոց՝ և աղաւաղել մեր
 Եկեղեցւոյ սուրբ և անբիծ կանոնները. հարկաւոր
 է զգուշանալ անդ ուր չկայ դեռ երկիւղ. առում է
 Հայկական առածը, — հարիւր անգամ չափի՛ր մի
 անգամ կտրիր թող մտածողաբար աշխատեն և
 կատարեն ամենայն նրբութեամբ Ազգիս այժմեան
 բանասէրք այն բոլոր հարկաւորութիւնքն որք յա
 տուկ պէտք են Ազգիս:

Սրացոյցը և Տօնացոյցը միեւնոյն չեն, ինչպէս Տօնացոյցը և Տօնարագիտութիւնը միեւնոյն չեն:

մանք անոս մ սլա անչա... ցրդ տիրոս լամն զմն
— Գրքսամոն Կոմսարմի. զո մմ մցն Գեորգուտեք

**67. Բնութիւն Գերմանաց Գուպէ յի,
— Германа Готте Ռուսաց մեծադիր
Օրացոյցի մէջ եղեալ 1878 թ. Հայոց
Օրացոյցի:**

**Փետրբուրգի մէջ հրատարակուեցաւ այս 1878 թ.
Ռուսաց մեծադիր ամենայն տեղեկութեամբ լի Օրա-
ցոյց, որի մէջ է՝ և Հայոց Օրացոյց 1878 թ. հարկա-
ւոր ենք համարում ներկայացնել և սորա մէջ մտած
սխալները:— Փետրվարի 5 զրուած է 5 երրորդ կիւ-
րակէ. որ պէտք է լինէր՝ 4: 20 չէ՝ զրուած հետե-
ւեալ սրբոց վկայիցն՝ Արղլմանհի, Արմզդանայ և
Սայենի, որ պէտք է լինէր: Օգոստոսի 3 զրուած է
աւելի և Նավինայ: Նոյեմբերի 27 չէ զրուած՝ Ին-
գոսի և Գոմնայի կուսանացն, այլ զրուած է Գեկ-
տեմբերի մէջ, որ սխալ է:**



քնն Կարի 68. Զանազան լուրեր: ԳՅԻ Ե
— Կարի 68. Զանազան լուրեր: ԳՅԻ Ե

Չինի մահուան մեծ. Կուկաու. Պաղպաղարեան,
որ ի Զմիւռնիայ, նորա պարկեռափայլ ամուսինն
Տիկին Փագուհի Պաղպաղարեանն հանգերն իւր Ե-
րուանդ որդւով սիտց հրատարակել իւր ամուսնոյ
դատուական լրագիրն ակրշաղթսն Արարատեանս որ
38 տարի է հրատարակվում է: Բնագր և պատի
պաշտի ուսումնասեր և անբն բնութեամբ:



**Մինչև Օրացոյցիս տարածուիլը՝ և հրատարակուի
առանձին տեարակով, Պատասխան և հերքումն Եր-
րիջ ստորագրութեամբ յօշոտմին, որ ապում է
Փորձի № III-ի մէջ 333 - 338 կրտսննրում. խոր-
հո՛ւրդ եմք ապի ամեն մի Հայի, որ նախ բնութեանու
Փորձը, և ապա մեր անասն քննութիւնը, որ
կտեանն ամեն բան պարզում մինչև որ, Երբէն
(որին մենք գիտնեք ով լինելը ամենայն սխալները
տին յանդիման սխալի վայրի բնոջ հանուր դատաստա-
նի առջև, և այն ժամանակը, ե՞վ գիտէ, որ յայտի
ձածուկ տեղեր պիտի վնասուի իւր համար...
* * ***

Ամենայն խոնարհութեամբ առաջարկում ենք Սրբազան Աինօգի Ս. Էջմիածնի անգամոց խորին ուշադրութեան հետազոտութեանցը «Մշակի» № 139-1878 թ. Օգոստոսի 16 «Բարձրագույն» միջոցառումների մասին առաջարկներն ազգային առաջնորդող յօդուածը: «Ժամանակը ոսկի է» ասում է հանգուցեայն Իւթուճեան. ահա մեր կղերականութեան պարս ու պատշաճ շտապելու գործ: «Ո՛վ որ ուշ կարթնանայ ի քնոյ՝ բոլոր օրը՝ կուշանայ իւր գործոց մէջ» ասում է հրչակսօ որն Ֆրանքլին: Անցեալները թո՛ղ լինին մեզ դաս: Հարկաւոր է ամեն մի Հայի աշխատել և գործել, թրմութեան ժամն անցաւ...:

* * *

Բազուից ստացանք անյայտ հեղինակից մի փոքրիկ անտրակ «Երբէն Սպեփանէն Բաճուի մեջ» վերնագրով: Յաւալի ընթերցուածք, ակտիւ գործունէութիւնք...: Յայտնում ենք շնորհակալութիւն:

* * *

Տփեսիսից ստացանք Պ. Յ. Նահապետեանիցից մի փոքրիկ անտրակ «Գալուստի Երեմիականացի Քերտոյ» խորհուրդ ենք տալիս ընթերցողաց կարգալ նախապէս

անշուշտ Արարատը, իսկ յետոյ պ. Նահապետեանիցի գրուածքը: Յայտնում ենք շնորհակալութիւն:

* * *

Ասում ենք հաստատ աղբիւրից որ պ. Գալուստ Երեմիականացի պատրաստել է արդէն պ. Նահապետեանի դէմ պատասխանն. և որը՝ մտա միջոցներում կհրատարակուի: Կը տեսնենք ի հարկէ:

* * *

Նոր Նախիջևանից ստացուեցաւ անյայտ հեղինակից «Հին պատմական» վերնագրով մի անտրակ տեղական բարբառով. այս գրուածքի մասին մեզ պատմեց մի ականատ որ անձն Ռաստովում, որ կան այդտեղ քանի մի անձնութիւնք, մենք խորհուրդ տուինք, եթէ իրաւ է թող պատասխանեն, որ յիրաւի փափակել էր տեսնել հանդէպը, որ սպասում ենք: Յայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

* * *

Արժանայարգ Յարութիւն սարկաւազ Առաքելեանցից ստացանք իւր հետեւեալ գրականական աշխատանքը:

տան թիւները: «Հասարակական տնային տնային» յայտնուած Կոմիտէի Զօհմանի 141 երես. գինն է փոստի ծախսով 40 կոպ. «Խառնից Գեղի լոյս» գործ Ծ. Զօհմանի 146 երես. գինն է 40 կոպ. և «Իժն Գեղար Լաճաշեցի» 240 երես. գինն է 70 կոպ. եթէ ներքևեց մեր միջոցը կկուսենք սոցա մասին, և, տարուայ «Փայլիկ Բնասանացի» մէջ: Ան այժմ մենք յայտնուած կէք մեր շնորհակալութիւնը:

* *

Ինչ որ եկաւ սպազարտան մասնուից և հրատարակուեցաւ մեր աշխատասիրած «Անուշեքի» ոչ էրէքտրի 5 արարուածով, մեծադիր, 120 երես. գինն է հանգերձ առաքմամբ Գրուելի:

* *

Սիւհրափեշա՛ պարտք ենք համարում զնիկ ըրցողաց գործուցանել խորանց խորին ուշադրութիւնը, «Անուշեքի» Զայաստանի լրագրի № 3 1878 թ. Անուշեքի 2 ի մէջ տպուած «Պրիմակուլութիւն Երեսանից» գեղեցիկ և պատուական յօդուածը պ. Պ. Բ. և. ստորագրութեամբ, որ ամեն մի բանխոսց Զայի պիտի գրուէ գեղեցիկ զգացմունքով:

* *

Տաճկաստանի Ամենապատիւ և Պատրիարքը յայտնուած 1878 թ. 3 երկամսարդ վարդապետներ Տաճկական Զայաստանի զանադան կողմերը որ Զայոց թիւը ճիշտ վիճակագրին, այդ պատուական հոգևոր հովիւներից մէկին՝ բարձրապատիւ Վահան վարդապետ Տէր Մինասեանցին տեսանք Տիֆլիսում, որի հետ և ճանապարհորդութիւն արիւք մինչև Երևան. մենք շատ սիրեցինք այս վառփուռն և ճարտար վարդապետին. այստեղից զնաց նա ս. Եջմիածին տաճարի Անհափառ կաթողիկոսն. որը նորին Անհ. Յոռու թեանը ներկայանալուց յետոյ զնացել էր մինչև Անուշեքի ժողովուրդի գրութիւնը տեսնելու, որը շատ ազգու քարոզութիւններից յետոյ՝ հազիւ կարողացել էր մնացողաց գաղթականութեան առաջն առնել և Երբ վերադարձաւ առ մեզ Երևան՝ արամութեամբ պատած սոսց՝ մենք զարմանում ենք, որ այսքան վարդապետներն լլուած ս. Եջմիածնումն, այսքան միջոց մի վարդապետ, մի քարոզիչ ևս չէ գնացել այն խեղճ անտերունջ ժողովուրդին քարոզելու, ահա՛ քարոզութեան տեղ և պարտուպատշաճ պարտք: Իրաւի՛ մեր ս. Եջմիածնական միաբանութիւնը այդ պէտք է անէր, պէտք է տիրապետութեամբ քարոզէր նոցա աննախնամ զրութեանց վերայ, ամբողջ Երևանումն աջ ու ձախ լին ան այդ

գաղթականներից, անպորժ ընկած դռնէ գուռն ու
 դորմութիւն են ժողովում, շնայելով որ մեծ գումար-
 ներ ժողովուեցաւ նոցա համար. նոցա հարկաւոր
 էր նոյն իսկ առաջին գաղթականութեան օրից՝ լաւ
 տիրապետութեամբ քարոզել, գործի գնել, երե-
 խայքը ժողովել, գալրոց գնել, օրիորդներին
 նմանապէս. այլ ոչ թէ թոյլատրել որ այսպէս
 աղքատութիւն սովորեն, որ ողջ, առողջ, հսկայ և
 առօրգ մարդիկ են. թէ արք թէ կանայք. ահա այս
 բոլորի առաջն կարող էր առնել մեր ս. Եջմիածնա-
 կան միաբանութիւնը. որով այսքան ողորմելի դրու-
 թիւններ չէինք տեսնիլ:

* *

Մեզ պատմեցին որ Վանձակայ դաւառ Վալախու
 նահանգի Հաչաջուր գիւղում՝ որ ս. Մակարայ վան-
 քի մօտն է, 125 տուն հայ բնակիչ կան, ունեն 2
 քահանայ, բայց երկու շաբաթը մի անգամ են ժամ
 սաւում. լինում է այնպէս՝ որ անցնում է ամից ա-
 ւելի պատարագ չէ՛ մատուցանուիւմ. չունեն վարժա-
 տուն: Զարմանում ենք, որ ո՛չ ժամ կասեն, ոչ պա-
 տարագ կանեն, և ոչ էլ գալրոց կունենան. ուրե՛մն
 էլ ի՞նչի համար են քահանայքը. թո՛ղ լաւ հաս-
 կանան այսպիսի քահանաներն, որ ժողովրդոց յե-
 տադիմութեան, անհասկացողութեան, և վերջապէս

մեղաւորութեան առի՛թքը, նոյն իսկ իրանք են:
 Խնդրում ենք, սթափուել թմրութիւնից, և որպէս
 ղեկաւար Հայ գործ գործել և բարի օրինակներ
 հանդիսանալ. վասն զի ժամանակը խիստ թանգ է
 մեզ համար: Պատմեցին նա ևս որ նոյն տեղացի պ.
 Տիրգրան Վարդանեան Տէր Յովհաննիսեանց՝ վառվռուն
 երիտասարդն, ժողովել է 300 բուբլի, և աշխատում
 է մեծացնել գումարը, որպէս զի, գալրոց հաստատէ
 գիւղում: բոլոր սրտից ցանկանում ենք յաջողութիւն:
 Կարձուցանում ենք Վանձակայ Հոգևոր կառավա-
 րութեան ուշադրութեամբ հսկողութիւնը այս բոլորի
 վերայ:

* *

Յիշեալ բարձր. Վահան վարդ. Տէր Մինասեանցն,
 իւր վիճակագրութեան մէջ ժողովել է Հայաստանի
 յատուկ առակներն որոնք մտադիր է նա վերջը
 բանաստեղծական կերպիւ շինէ: Մեր խնդրանայ
 համաձայն՝ տուեց մեզ մի քանիսը, որ մտադիր ենք
 յետս յետէ հրատարակել մեր «Ծաղիկ Ընտանեացի»
 մէջ: Ահա այժմ հրատարակում ենք «Յորէն և Կորէկ»
 առակը:

69. Հայկական առակներից՝

ՅՈՐԷՆ ԵՒ ԿՈՐԵԿ:

Յորէնը մի օր ասաց Կորեկին, եղբայր ես գնում եմ օտար աշխարհ, խնդրե՛մ դու մի միջոց քո պաշտօնս կատարի, այն է՝ հաց դարձիր և կերակրիր ժողովուրդիս, միայն ինձ նման չկերակրես, այլ կօշոլ եղիր: Կորեկը պատասխանեց, — շատ բարի, Յորէն եղբայր, ես կդառնամ կոշոլ հաց և կը կերակրեմ բոլորին: Յորէնը գնաց, սոփե՛ր ընկաւ: Անցաւ բաւականին միջոց որ Կորեկը կերակրում էր բոլորին, մի օր Կորեկը մտածեց, թէ ինչի՞ ես ևս չեմ երկարում, որպէս Յորէնը. նա սկսեց երկարել և երբ կամենում էր հաց դառնալ՝ յանկարծ փշուր փշուր եղաւ. ի հարկէ շատ տխրեց թէ սխալմանց վերայ յանկարծ յետ եկաւ. Յորէնը և երբ տեսաւ որ Կորեկը փշուր փշուր է եղած՝ ասաց, Կորեկ եղբայր, քեզ ո՞վ ասեց որ քո չափից գուրս երկարես... որ այդ օրն ընկնես. ուրեմն գնա՛ դարձեալ թռչնոց կերակրելու:

— Երբ նստած եմ որ ամեն ճորտ պարտաւոր եմ ևս փոքն սպրեւ, հարստութիւն, գաւառականութիւն, եւ ինչնեւեռաւորութիւն. երբեք չտրեպս է անկէսոյ, սպոր լէ ոչ Կորեկի նման փշուր, փշուր էլ եմի:

եղած կրօնների և լեզուների թիւը: 21. Վայրենի մարդիկ: 22. Օղիի ողեաց (СПИРТНЫХЪ) ըմպելիքների ազդեցութիւնը: 23. Գինեղ գործածութեան ազդեցութիւնը: 24. Մխախտի և քթախտի ազդեցութիւնը: 25. Գարգալ բաժակ: 26. Անկեղծ պատասխան: 27. Բազումք փոստայի կանոններից: 28. Ապահովութեան գները: 29. Քննութիւն և հերքումն պ. Ս. Զէլինսկու նամակին: 30. Վրիպակք: 31. Պատասխան և հերքումն պ. Ս. Զէլինսկու իբր քննողական նամակին: Գինն է տետրիս 15 կուպ.

Երբորդ ամբի 1878 Բ.

32. Բարոզիչ Առաքեալն Հայաստ. ս. Բարդուղիմէոս: 33. Տեառնընդառաջ: 34. Գիւտ և փոխազրութիւն նշեարացն Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի: 35. Հայ երկրագործն: 36. Արիւ մօրից ծնուած: 37. Ագնի սիրահարութիւն կամ ուղիղ կշիռ: 38. Ձերմատութեան ջերմ—տենդ բժշկութեան հնարը: 39. Գարձեալ ջերմատութեանց հնարքը, մի այլ կերպ: 40. Գլխի մոզերը մաքրացնելու, թէ՛ փը հանելու և չափազանց փափկացնելու գիւտը: 41. Մի քանի երկարակեաց մարդիկ: 42. Հաւատարմութեան ազնվութիւնը կորցնելը: 43. Հանելուկ: 44. Մասնազրութիւն Փարոս խմբ. բանաս. գիտ: 45. Պատասխան և հերքումն Ա. գուլիսից դրած իբր քննողական նամակին: 46. Քննութիւնը 1877 թ. Հայոց օրացոյցների: 47. Վրիպակ: 48. Զանազան լուրեր:

Գինն է տետրիս 25 կուպ.
Իսկ չորրորդ տարի 1879 Ս. տեսնել Օրացոյցիս մէջ:

Գինն է Օրացոյցիս հանդերձ յաւելումսով

Բնիկ 600 հղան (верст) հեռուստիւնք 30 կպ.

Իսկ 600-ից բարձր 35 կպ.

Սորա հետ ի միասին հրատարակում ենք և Փոքրա-
դիր ՕՐԱՅՈՅՑ 1879 թ. հանդերձ Խորէն Նար—բէյի
և Խրիմեանի պատկերներով: Գինն է 15 կպ:

Редакторъ—Издатель Абгаръ Степановичъ
Гуламирянцъ.

« Ազգային գրադարան



NL0359144

